

Փոքր Հայքի կազմավորման ժամանակը

Խորհիլյան Հովհաննես

Հանգուցային բառեր. Կուրտիոս Ռուփոս, Արիանոս, Գավգամելայի ճակատամարտ, Մեծ Հայք, Պակտյուիկե, սատրապ, Օրոնտես, Միթրաուստես

Նախաբան

Փոքր Հայքի ձևավորման ժամանակաշրջանի հարցը հայագիտության վիճահարույց հարցերից է: Խնդիրն այն է, որ աղբյուրագիտական տեղեկությունները խիստ սակավ են ու կցկտուր, ինչն էլ գիտական տարբեր մեկնաբանությունների տեղիք է տվել: Խնդրո առարկայի ամբողջական և հիմնավոր քննությունը հնարավոր է միայն մ. թ. ա. VI-IV դարերի Հայաստանի վարչաքաղաքական կացության իրողությունները հաշվի առնելու պարագայում, որպեսզի պատկերացնենք Փոքր Հայքի առաջացման տարածաժամանակային պայմանները:

1. Կուրտիոս Ռուփոսի և Արիանոսի տեղեկությունները

Փոքր Հայքն առաջին անգամ հիշատակում է մ. թ. I դարի հռոմեացի պատմիչ Կուրտիոս Ռուփոսը: Վերջինս գրում է, որ Գավգամելայի ճակատամարտում պարսից բանակի ձախ թևում գտնվող Փոքր Հայքի (բառացի՝ «փոքր») հայերին հետևում էին բաբելոնացիները, վերջիններիս և ուրիշների՝ բելիսները՝ Քոսեյան լեռների բնակիչները [15, 350; 18, 115; 27, 272]: Պարսից բանակի «աջ թևում կանգնած էին Մեծ Հայքի հայերը (բառացի՝ Մեծ Հայքի ժողովուրդը, ազգը-Չ. Խ.), կաղուսիներն ու կապադովկիացիները, ասորիներն ու մարաստանցիները» [15, 351; 18, 115; 27, 272, 274]: Ռուփոսի տեղեկություններից ստացվել է, որ պարսից բանակի ձախ թևն ավելի բազմացել է եղել, քան աջը: Հետո էլ, զարմանալիորեն, Փոքր Հայքի հայերը հայտնվել են այնպիսի ժողովուրդների կողքին, որոնց հետ աշխարհագրական առումով սահմանակից չեն, այն դեպքում, երբ Աքեմենյաններն իրենց բանակների դասավորության մեջ հարևան ժողովուրդներին, հիմնականում, հիշատակում են կողք կողքի: Ընդ որում, աշխարհագրական մերձավորության սկզբունքը և վարչական միևնույն միավորի մեջ ընդգրկված լինելու իրողությունը Ռուփոսը գրեթե պահպանում է մյուս ժողովուրդների գորագնդերի պարագայում, ինչն ակնհայտ է նաև Մեծ Հայքի հայերի հետ նշված ժողովուրդների դեպքում:

Մ. թ. II դարի հույն պատմիչ Արիանոսը, ներկայացնելով Գավ-

գամելայի ճակատամարտում հիշտակվող պարսկական բանակի ցեղային կազմը, հայկական և կապադովկիական հեծելագործները հիշատակում է բանակի աջ թևում [20, 256]: Ինչպես տեսնում ենք, Արիանոսը հայերին չի տարբերակում և հիշատակում է որպես մեկ ամբողջություն [3, 213-217], սակայն որոշ ուսումնասիրողներ ենթադրել են, որ հայկական զորքերի հրամանատարներ Օրոնտեսը և Միթրաուստեսը [20, 246] Մեծ Հայքի և Փոքր Հայքի կառավարիչներն են, որոնք Գավգամելայի ճակատամարտից հետո վերականգնում են Մեծ Հայքի ու Փոքր Հայքի անկախությունը [13, 42, 50; 10, 455]: Այս տեսակետի կրողները փաստորեն ընդունում են, որ մ. թ. ա. IV դարի 30-ական թվականներից առաջ Մեծ Հայքի և Փոքր Հայքի գոյությունն իրողություն է, սակայն նման ենթադրության համար որևէ աղբյուրագիտական տեղեկություն չկա: Աքեմենյան տիրապետության դարաշրջանում Մեծ Հայքի և Փոքր Հայքի տարածքը հիմնականում ընդգրկված էր Սատրապական Հայաստանի կազմի մեջ, որը Քսենոփոնն անվանում է «մեծ ու հարուստ» [16, 81]: Մեզ համար ընդունելի է Ս. Կրկյաշարյանի այն կարծիքը, որ հիշյալ գորահրամանատարներից մեկն (Օրոնտեսը-Չ. Խ.) առաջնորդում էր հայկական 7000-անոց հեծելագործը, իսկ մյուսը (Միթրաուստեսը-Չ. Խ.)՝ հայկական 40000-անոց հետևակը [6, 73-74]:

Հարց է ծագում, թե ինչու է Ռուփոսը հիշատակում Փոքր Հայքը: Հնարավոր է, որ Ռուփոսի մեջբերված հատվածում Փոքր Հայքի ու հայերի մասին տեղեկությունը հետագայի ընդմիջարկություն է [1, 433], քանի որ որևէ տրամաբանություն այդ հիշատակության մեջ չկա: Խնդիրը ոչ միայն Փոքր Հայքի հայերի ու բաբելոնացիների հարևաններ չլինելու հանգամանքն է¹, այլև այն պարզ հարցադրումը, թե այդ ի՞նչ լուրջ թվաքանակի զորագունդ պետք է ներկայացնեին հենց Փոքր Հայքի հայերը, որ առանձին հիշատակության արժանի լինեին: Ըստ էության, հնարավոր է նաև մեկ այլ՝ ավելի ընդունելի բացատրություն: Պարսից բանակում գտնվող հայկական զորամասերը բաժանված են եղել երկու մասի, և հայկական հետևագործը, թերևս, գտնվել է պարսից բանակի ձախ թևում: Ռուփոսը, օգտվելով իր աղբյուրներից, հայերի մասին առաջին հիշատակությունից հետո ավելացրել է իր ժամանակներում հայտնի Փոքր Հայք անվանումը՝ փորձելով աշխարհագրորեն նույնականացնել հայերի մի հատվածին: Այս ենթադրությունը հեշտությամբ համադրելի է Օրոնտեսի և Միթրաուս-

¹ Արիանոսը բաբելոնացիների հետ հիշատակում է «արտաքսված» կարիացիներին ու սիտակեններին [20, 246], որոնք աշխարհագրական և վարչական առումով հարևաններ են [4, 41, 232-233, 377]:

տեսի մասին Արիանոսի տեղեկությանը, հատկապես որ վերջինս պարսկական բանակի աջ թևում հիշատակում է միայն հայկական հեծելազորը, ինչից բխում է, որ Արիանոսն էլ բաց է թողել հայկական հետևազորի մասին տեղեկությունը: Հարկ է նաև նշել, որ Ալեքսանդրի արշավանքի պատմության հեղինակների տեղեկությունները միննույն իրադարձությունների մասին տարբեր են: Օրինակ, Ռուփոսը կադուսիներին հիշատակում է պարսկական բանակի աջ թևում, իսկ Արիանոսը՝ ձախ թևում [20, 254]: Ըստ այդմ էլ, հայկական բանակի մի զորամասի հայտնվելը պարսկական բանակի ձախ թևում հնարավոր էր:

Մ. թ. I դարի հռոմեացի պատմիչ Ռուփոսի աշխատության ստեղծման ժամանակ մ. թ. I դարի 40-ական թվականների սկզբին [18, 12], Մեծ Հայքի և Փոքր Հայքի միացյալ թագավորության գահին էր Կոտիսը (մ. թ. 37-43 թթ.) [7, 721], ինչը թույլ է տվել անտիկ հեղինակին, ելնելով իր ապրած ժամանակաշրջանի քաղաքական իրավիճակից, Գավգամելայի ճակատամարտում հիշատակվող հայերի մի մասին աշխարհագրորեն կապել Փոքր Հայքի, իսկ մյուս մասին՝ Մեծ Հայքի հետ: Մյուս կողմից էլ նկատենք, որ Գավգամելայի ճակատամարտում Մեծ Հայքի գաղափարը ևս պատմիչի կողմից իր ժամանակի քաղաքական իրողությունների արտացոլումն է, քանի որ մ. թ. ա. 331 թվականին Հայաստանն Աքեմենյան տերությանը ենթակա մեկ ամբողջական սատրապություն էր: Ստացվում է, որ Ռուփոսը պարսկական բանակի աջ թևում գտնվող հայերին, տվյալ դեպքում հայկական հեծելազորը, կապել է Մեծ Հայքի հետ, ինչն էլ պատմիչի մոտ առաջացրել է որոշակի խառնաշփոթ: Ռուփոսի կողմից Փոքր Հայքի հայերի մասին տեղեկությունը քննելիս պետք է ուշադրություն դարձնել նաև նախորդ հիշատակությանը, որն անորոշ է և թույլ է տալիս մոտավոր նույնացման փորձ կատարել: Ռուփոսը, պարսկական բանակի կազմում հիշատակելով հնդիկներին ու Կարմիր ծովի բնակիչներին, գրում է, որ «այդ ամբողջ շարքը եզրափակում էին ևս հիսուն մանգաղակիր մարտակառքեր, որոնց Դարեհը (արքայից արքան-Չ. Խ.) կցել էր օտարերկրյա զինվորներին» [15, 350; 18, 115; 27, 272]: Պատմիչն այնուհետև օտարերկրյա զինվորներից հետո հիշատակում է Փոքր Հայքի հայերին, ինչը ցույց է տալիս, որ Ռուփոսի տեղեկությունները, Արիանոսի նույն տեղեկությունների համեմատությամբ, ավելի հակիրճ ու ցրված են: Օտարերկրյա զինվորները հավանաբար վարձկաններ են եղել, սակայն դա այնքան էլ կարևոր չէ, քանի որ աշխարհագրական ու վարչական բաժանման սկզբունքի պահպանման պարագայում Ռուփոսը Փոքր Հայքի հայերի կողքին պետք է հիշատակեր, օրինակ, Պակտյունիկեի արևելյան

հատվածը բնակեցրած կատառններին ու նույնիսկ փոյուզիացիներին: Հետևաբար, պետք է ընդունենք, որ Փոքր Հայքի մասին Ռուփոսի հիշատակությունը քննություն չի բռնում, իսկ այն հանգամանքը, որ Ռուփոսը պարսկական բանակի ձախ թևում գտնվող հայերին բառացի անվանում է «փոքր» հայեր, չի նշանակում, որ խոսքը վերաբերում է Փոքր Հայքի հայերին: Պատմիչը չի հասկացել, որ խոսքը վերաբերում է հայկական հետևագորին ու «փոքր» բնորոշումով արտահայտել է իր դարաշրջանի պատմական իրողությունները: Նույն Ռուփոսն այլ տեղեկություններում Մեծ ու Փոքր Հայք անունների փոխարեն օգտագործում է Հայաստան անվանումը [15, 411], ինչը համապատասխանում է ժամանակաշրջանի քաղաքական իրողություններին:

2. Փոքր Հայքի առաջացման վարչաքաղաքական նախապայմանները

Փաստն այն է, որ Փոքր Հայքի գաղափարը ծագել է մ. թ. ա. 331 թվականի Գավգամելայի ճակատամարտից հետո, իսկ այդ գաղափարի առաջացման համար Աքեմենյան երկհարյուրամյա տիրապետության շրջանում հայկական սատրապության ներքում ձևավորվել էին վարչական բաժանման որոշակի պայմաններ: Ժամանակին այն կարծիքն էինք հայտնել, որ Օրոնտեսը և Միթրաուստեսը միայն գորավարներ չէին և ունեին նաև վարչական կառավարման կարգավիճակ, այսինքն՝ Օրոնտեսը Հայաստանի սատրապն էր, իսկ Միթրաուստեսը՝ Եփրատից արևմուտք ընկած Պակտյուիկեի հյուպարքոսը [3, 215-216]: Պակտյուիկեն XIII սատրապության ենթաշրջաններից էր [12, 197], որը տարածվում էր Եփրատից արևմուտք՝ հասնելով մինչև հետագայի Կեսարիա-Մաժակի շրջան [2, 30, 33]: Մ. թ. ա. V դարի վերջին Պակտյուիկեի արևելյան մասը Միլիդոս անունով, տարածվում էր հետագայի Մելիտինե (ներկայումս՝ Մալաթիա) քաղաքի հարակից տարածքներում՝ ընդգրկելով նաև հետագա Փոքր Հայքի տարածքը, այսինքն՝ նշված տարածքները վարչական առումով Արևմտյան Հայաստան հյուպարքիայի մասն էին, որի կենտրոնը, հավանաբար, Միլիդոսն էր [22, 174-180]: Արևմտյան Հայաստան հյուպարքիայի՝ Եփրատ գետից արևելք ընկած շրջաններն [2, 59] Աքեմենյան տերության անկումից հետո շարունակում են մնալ Հայաստանի կազմում, այն դեպքում, երբ նույն գետից արևմուտք ընկած հայկական տարածքներում ստեղծվում է վարչաքաղաքական նոր իրավիճակ: Ըստ էության, Փոքր Հայքի՝ որպես վարչաքաղաքական միավորի ձևավորման առաջին հիշատակությունը վերաբերում է Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո ընկած ժամանակաշրջանին:

Մ. թ. ա. 323 թվականի Բաբելոնի ժողովի որոշումով Եվմենեսին բա-

ժին են հասնում Կապադովկիան, Պափլագոնիան և Սև ծովի հարավային առափնյա տարածքը մինչև Տրապիզոն [25, 84; 15, 596]: Այս նույն իրադարձությունների մասին Դիոդորոս Սիկիլիացին գրում է, որ Պերդիկասը Եվմենեսին տալիս է Պափլագոնիան, Կապադովկիան և սրանց սահմանակից բոլոր այն երկրները, որտեղ Ալեքսանդրը շտապ գործերի պատճառով հնարավորություն չունեցավ ներխուժել՝ ձգտելով արագ ավարտել Դարեհի հետ պատերազմը [21, 228]: Ալեքսանդր Մակեդոնացին չէր նվաճել Հայաստանն ու Փոքր Հայքի տարածքը [19, 115-120], և Եվմենեսի սատրապությանը սահմանակից հայկական տարածքները՝ Եփրատ գետից արևմուտք, անցնում են վերջինիս տիրապետության տակ: Այս մասին վկայում է Պլուտարքոսի այն տեղեկությունը, որ Եվմենեսը Պերդիկկասի կողմից նշանակվել էր «Հայաստանի և Կապադովկիայի գորքերի հրամանատար» [25, 90]: Հայաստանի տակ պետք է հասկանանք ամբողջ Հայաստանը, ոչ թե միայն Փոքր Հայքը, սակայն մակեդոնացիների իշխանությունն Օրոնտեսի Հայաստանի վրա չտարածվեց, ու Եվմենեսի իշխանությունը տարածվում էր միայն Փոքր Հայքի վրա, որտեղ նրա իշխանությունն ամուր չէր: Հենց այս ժամանակ է, որ Հայաստանին իշխելու համար ուղարկվում է Նեոպտոլեմոսը [25, 88], ու հնարավոր է, որ վերջինս հնազանդեցնելու էր Հայաստանը, ոչ թե միայն Փոքր Հայքը [6, 66], որի կառավարիչն էր: Նեոպտոլեմոսին չի հաջողվում գրավել Հայաստանը, բայց Եվմենեսը կարողանում է նվաճել Եփրատից արևմուտք ընկած հայկական հողերը, որոնք էլ այս ժամանակներից հույների գիտակցության մեջ սկսում են կոչվել Փոքր Հայաստան-Հայք՝ ի տարբերություն Հայաստանի մեծ մասի՝ Մեծ Հայքի: Պատահական չէ, որ Եվմենեսի տիրապետության տակ գտնվող հայկական հողերը հետագայի Փոքր Հայք անվանումով կազմում են առանձին վարչական միավոր, որի կառավարչին մ. թ. ա. 179 թվականին Պոլիբիոսն անվանում է Արմենիայի սատրապ, իսկ Արտաքսիաս-Արտաշեսին՝ «Արմենիայի մեծագույն մասի տիրակալ» [26, 470]:

Արմենիայի սատրապ Միհրդատը թագավոր (նաև նրա հաջորդներ Միսիսը և Անտիպատրոսը [28, 424]) չի եղել, սակայն այդ հանգամանքը չի խանգարել, որ նա վարի ակտիվ արտաքին քաղաքականություն և իր գործունեությամբ փաստացի համարվի անկախ: Ըստ էության, Փոքր Հայքի իշխանավորները չեն կրել արքայական տիտղոս, սատրապի տիտղոսի առկայությունը մ. թ. ա. III-II դարերում վկայում է միայն կախյալ վիճակի մասին², թեկուզ հաճախ այդ կախվածությունը ձևական

² Ս. Կրկյաշարյանի ենթադրությամբ, Միհրդատը եղել է Սելևկյանների

լինեք, և միայն Միհրդատ VI Եվպատորն է, որ իրեն հռչակում է «թագավոր Պոնտոսի և Հայոց» [11, 149; 13, 72], այսինքն՝ Փոքր Հայքի: Նշեն նաև, որ մ. թ. ա. IV դարի վերջի-II դարի վերջին քառորդի Փոքր Հայքի, այսպես ասած, թագավորների ու սատրապների անուններով դրամների առկայությունը գոնե այս պահին խիստ կասկածելի է [23, 49-52]³, քանի որ նույնականացումները հիմնված են գիտական ոչ խորն ու համապարփակ վերլուծության վրա:

Ինչպես տեսնում ենք, վերևում բերված տեղեկություններում Փոքր Հայք պատմաաշխարհագրական հասկացությունը մենք ենք օգտագործում՝ Եփրատից արևմուտք ընկած բնիկ հայկական տարածքները ցույց տալու համար: Այս տարածքների վարչաքաղաքական կապը Կապադովկիայի հետ գոյություն ուներ Աքեմենյան դարաշրջանից սկսած, ինչն Ալեքսանդր Մակեդոնացու ժառանգները փորձում են ամրագրել նոր իրողություններով: Պատահական չէ, որ մ. թ. ա. 321 թվականի Տրիպարադիստում տեղի ունեցած սատրապությունների վերաբաժանման ցանկում [21, 266] Հայաստանը չկա, իսկ Կապադովկիայի առանձին հիշատակությունը թույլ է տալիս ենթադրել, որ Փոքր Հայքի տարածքն (ըստ էության ձևական) այս սատրապության կազմի մեջ էր, ինչպես 2 տարի առաջ էր: Դիոդորոս Միկիլիացու այն տեղեկությունը, թե Եվմենեսը փորձում էր դաշնակիցներ ձեռք բերել Հայաստանից [21, 267], պարզ չէ՝ խոսքը Հայաստանի՞, թե՞ Փոքր Հայքի մասին է:

Աղջակալեի արձանագրությունում հիշատակվող Արմենիայի սատրապը [8, 266; 13, 51] Փոքր Հայքի կառավարիչն է: Եթե արձանագրությունում հիշատակված Արիաուկա-Արիակեսը Գավգամելայի ճակատամարտում հիշատակվող Արիակեսն է [20, 246]⁴, ապա մ. թ. ա. III դարի առա-

վասալը [5, 103]: Կա նաև ենթադրություն, որ այս Միհրդատը Պոնտոսի թագավոր Փառնակեսի եղբայրն է [24, 276], բայց այս դեպքում էլ հարց է ծագում, թե ինչու է Փառնակեսից առանձին Միհրդատը հաշտության պայմանագրի կողմ: Հնարավոր է, որ Միհրդատի առանձին մասնակցությունը պայմանագրի կնքմանը պայմանավորված էր այն իրողությամբ, որ հակառակորդները Փոքր Հայքը չէին ճանաչում Պոնտոսի մասը:

³ Օռփքի արքայացանկի Ֆ. Կովաչի վերականգնումն իրավացիորեն անհիմն է համարել Ա. Մովսիսյանը [13, 167-170]: Հայ նշանավոր դրամագետ Խ. Մուշեղյանը գրում է Փոքր Հայքի արքաների դրամների մասին, բայց որևէ հստակ օրինակ չի բերում [14, 30-31]: Փոքր Հայքի արքաների ու սատրապների դրամների մասին տվյալներ չկան նաև հետևյալ գրքում. [9]:

⁴ Մ. թ. ա. 321 թվականի Տրիպարադիստի ժողովում հիշատակվում է Կապադովկիայի սատրապ Նիկանորը, ինչից, թերևս, կարելի է եզրակացնել, որ Կապա-

ջին կեսին Եփրատից արևմուտք ընկած հայկական տարածքները Փոքր Հայք անվանումով շարունակում են մնալ Կապադովկիայի կազմում: Արձանագրությունում սատրապ Բառի վկայությունը ցույց է տալիս, որ Փոքր Հայքը թագավորություն չէ, բայց սատրապների իշխանությունը ժառանգական բնույթ է կրում: Հենց այս հանգամանքն է հիմք տվել Ստրաբոնին, որ գրի՝ Փոքր Հայքում ևս իշխել են բնիկ դինաստներ⁵, որոնց «տիրապետության տակ էին նաև տիրաբեռները և խալդայները, այնպես որ նրանց իշխանությունը տարածվում էր մինչև Տրապեզունտ և Փառնակիա» [28, 422, 424]: Փաստորեն, Փոքր Հայքի կազմում մ. թ. ա. III դարում – II դարի սկզբին գտնվել են Աքեմենյան նախկին XIX սատրապության ընդարձակ տարածքներ: Ի դեպ, առաջին անտիկ հեղինակը, որն օգտագործում է Փոքր Հայք բառակապակցությունը, ըստ էության, Ստրաբոնն է:

Եզրակացություն

Այսպիսով, կատարված քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Գավգամելայի ճակատամարտում Փոքր Հայքը՝ որպես պատմական իրողություն, դեռևս չկա, և նրա տարածքը մտնում էր Պակտյուիկե վարչական միավորի մեջ: Փոքր Հայքը մինչև Միհրդատ VI Եվպատորը թագավորություն չի եղել, ինչի մասին վկայում են երկու տարբեր դարաշրջանների աղբյուրների տեղեկությունները: Փոքր Հայքի տիրակալներն արքայական տիտղոս չեն ունեցել, կրել են սատրապ տիտղոսը, ինչը խոսում է նրանց կախյալ վիճակի և որևէ երկրի թագավորի գերագույն իշխանությունն ընդունելու մասին: Այդուհանդերձ, Փոքր Հայքի դինաստները, օգտվելով արտաքին քաղաքական նպաստավոր պայմաններից, հաճախ ունեցել են փաստացի անկախ կարգավիճակ և ընդլայնել են իրենց տիրապետության սահմանները:

Գրականություն

1. **Ադոնց Ն.**, Երկեր, հ. Դ, Երևան, 2009:

դովկիայի նախկին սատրապ Արիակեսն արդեն Փոքր Հայքի կառավարիչն էր:

⁵ Դինաստներ անվանել են վասալական կախվածություն ունեցող կառավարիչներին, որոնք հաճախ նախկին անկախ երկրների արքայիկ-տիրակալներն էին: Դինաստներն ունեցել են քաղաքացիական և ռազմական իշխանություն [17, 155-157], ու այս առումով նրանք համեմատելի են հատկապես մ. թ. ա. IV դարի Աքեմենյան սատրապներին: Ստրաբոնը Շոփքի արքաներին [28, 324, 336] ևս համարում է դինաստներ, սակայն Փոքր Հայքի դինաստներին ո՛չ Ստրաբոնը, ո՛չ էլ մնացած աղբյուրները մ. թ. ա. IV դարի վերջից – II դարի կեսերին թագավոր չեն անվանում: Սկզբնական շրջանում դինաստ էր նաև Արտաշես Ա-ն [26, 470], որի թագավոր լինելը երբևէ կասկած չի հարուցել:

2. **Խորիկյան Հ.**, Հայաստանը և Այսրկովկասը Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումներում (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), Երևան, 2014:
3. **Խորիկյան Հ.**, Արիանոսի մի տեղեկության շուրջ // Պատմաբանասիրական հանդես, 2018, հմ. 2, էջ 213-217:
4. **Խորիկյան Հ.**, Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումը, Գյումրի, 2021:
5. **Կրկյաշարյան Ս.**, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1970:
6. **Կրկյաշարյան Ս.**, Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ. թ. ա. VI- մ. թ. IV դդ.), Երևան, 2005:
7. **Հայ ժողովրդի պատմություն**, հ. I, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1971:
8. **Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա**, հատ. 1, Հնագույն ժամանակներից մինչև Ք. հ. 298 թ., կազմողներ Պ. Հ. Հովհաննիսյան, Ա. Ե. Սովսիսյան, Երևան, 2007:
9. **Հայաստանի դրամաշրջանառության պատմությունը**, խմբագիր Ռ. Վարդանյան, Երևան, 2018:
10. **Հայաստանի հարակից երկրների պատմություն**, խմբ. խորհուրդ՝ Ռ. Սաֆրաստյան և ուրիշ., հ. I, Հին շրջան, Երևան, 2013:
11. **Հարությունյան Բ.**, Պոնտոսի Միհրդատ VI Եվպատոր թագավորը նաև հայոց արքա // Պատմաբանասիրական հանդես, 2003, հմ. 3, էջ 131-152:
12. **Հերոդոտոս**, Պատմություն ինը գրքից, թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1986:
13. **Սովսիսյան Ա., Մալխասյան Ս., Կարապետյան Լ.**, Հայաստանն ըստ անտիկ հեղինակների պատմաաշխարհագրական տեղեկությունների, Երևան, 2020:
14. **Սուշեղյան Խ. Ա.**, Դրամական շրջանառությունը Հայաստանում (մ. թ. ա. V դ.-մ. թ. XIV դ.), Երևան, 1983:
15. **Ռուփոս**, Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, «Ալեքսանդր Մակեդոնացի», Երևան, 1987:
16. **Քսենոփոն**, Անաբասիս, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1970:
17. **Бикерман Э.**, Государство Селевкидов, М., 1985.
18. **Квинт Курций Руф**, История Александра Македонского, М., 1963.
19. **Хорикян О. Г.**, Александр Великий и Армения // «Вестник истории, литературы, искусства», Альманах, Т. XIV, М., 2019, с. 115-120.

20. **Arrian**, *Anabasis Alexandri*, with an English transl. by E. Iliff Robson, Vol. I, Cambridge-Massachusetts-London, Loeb Classical Library, 1967.
21. **Diodori Bibliotheca Historica**, ed. L. Dindorfius, Vol. III, Lipsiae, 1826.
22. **Khorikyan H.**, The Administrative Division of the 13th Satrapy of Achaemenid Persia in the Reign of Darius II // *Metamorphoses of History*, Scientific Almanac, iss. 10, Pskov State University, 2017, pp. 174-180.
23. **Kovacs F. L.**, *Armenian Coinage in the Classical Period*, Classical Numismatic Studies, № 10, Lancaster, Pennsylvania, and London, England, 2016.
24. **Pastor L. B.**, *The Satrapy of Western Armenia in the Mithridatid Kingdom: Mobility in Research on the Black Sea Region*, editors: V. Cojocar, A. Rubel in collaboration with: D. Stah, T. Castelli, Cluj-Napoca, 2016, pp. 273-287.
25. **Plutarch's Lives**, with an English transl. by B. Perrin, Vol. VIII, Cambridge-Massachusetts-London, Loeb Classical Library, 1959.
26. **Polybius**, the *Histories*, with an English transl. by W. R. Paton, Vol. V, Cambridge-Massachusetts-London, Loeb Classical Library, 1960.
27. **Rufus Curtius Quintus**, *History of Alexander*, with an English transl. by John C. Rolfe, Vol. I, Cambridge-Massachusetts-London, Loeb Classical Library, 1971.
28. **The Geography of Strabo**, with an English transl. by H. L. Jones, Vol. V, Cambridge-Massachusetts-London, Loeb Classical Library, 1969.

Время формирования Малой Армении

Хорикян Оганнес

Резюме

Ключевые слова: *Курций Руф, Арриан, битва при Гавгамелах, Великая Армения, Пактиике, сатрап, Оронт, Мифравст*

Малая Армения впервые упоминается в I веке н. э. римским историком Курцием Руфом, сравнение сведений которого с Аррианом и другими историческими источниками раскрывают важные факты. В специальной литературе на протяжении многих десятилетий бытует мнение, что упомянутые в битве при Гавгамелах Оронт и Мифравст являются правителями Великой Армении и Малой Армении, которые после битвы при Гавгамелах восстановили независимость Великой Армении и Малой Армении. Сторонники этой точки зрения фактически признают, что существование Великой Армении и Малой Армении до 30-х годов IV века до н. э. является фактом, но для такого предположения нет информации из источников. В эпоху правления Ахеменидов территории Великой Армении и Малой Армении в основном входили в состав Сатрапской Армении.

На наш взгляд, эта точка зрения неверна, поскольку в битве при Гавгамелах Малая Армения, как историческая реальность, не существовала и ее территория входила в состав административной единицы Пактиике. Название «Малая Армения», к западным территориям от реки Евфрат, изначально было географическим названием для обозначения исконно армянских территорий, которые в результате политических событий попали под зону влияния могущественных соседей. В составе Малой Армении в III веке – начале II века до н. э. находились обширные территории бывшей XIX сатрапии Ахеменидской империи. Кстати, первым античным автором, употребившим словосочетание «Малая Армения», по существу является Страбон.

До Митридата VI Евпатора Малая Армения не была царством, о чем свидетельствуют сведения источников двух разных эпох. Правители Малой Армении не имели царского титула, они носили титул сатрапа, что говорит об их зависимом статусе и принятии верховной власти царя какой-либо страны. Тем не менее, династии Малой Армении, пользуясь благоприятными внешнеполитическими условиями, нередко имели фактически независимый статус и расширяли границы своего владычества.

The Formation Period of Armenia Minor

Khorikyan Hovhannes

Summary

Key words: *Curtius Rufus, Arrian, Battle of Gaugamela, Greater Armenia, Pactyica, Satrap, Orontes, Mithraustes*

Armenia Minor was first mentioned by Roman historian Curtius Rufus in I century A.D., whose data compared with Arrian and other historical sources reveals important facts. In the professional literature, for many decades, there is a dominant opinion that Orontes and Mithraustes mentioned in the Battle of Gaugamela are the rulers of Greater Armenia and Armenia Minor, who restored the independence of Greater Armenia and Armenia Minor after the Battle of Gaugamela. The holders of this point of view actually admit that the existence of Greater Armenia and Armenia Minor before the 30s of IV BC is a reality, however, there is no source of information for such an assumption. During the Achaemenid era, the territory of Greater Armenia and Armenia Minor was mainly included in Satrapic Armenia.

In our opinion, this point of view is wrong, because at the Battle of Gaugamela, Armenia Minor did not exist as a historical reality yet, and its territory was included in the administrative unit of Pactyica. The term “Armenia Minor”, west of the River Euphrates, was originally a geographic name to indicate the native Armenian territories, which as a result of political events came under the influence of powerful neighbors. Extensive territories of the former XIX Satrapy of the Achaemenid Empire were found to be part of Armenia Minor in the III century B.C. - beginning of the II century B.C. By the way, the first ancient author who used the phrase “Armenia Minor” was Strabo.

Armenia Minor was not a kingdom until Mithridates VI Eupator, as evidenced by the sources of two different eras. The rulers of Armenia Minor did not have any royal titles, but they had the title of satrap, which unveiled their dependent status and acceptance of the supreme power of the king from any country. Nevertheless, the dynasties of Armenia Minor, taking advantage of favorable foreign political conditions, often had a de facto independent status and expanded the boundaries of their dominion.

Ներկայացվել է 07.10.2022 թ.

Գրախոսվել է 20.10.2022 թ.

Ընդունվել է սպագրության 25.11.2022 թ.